« սիրժ կ'ասեն։ Ապա մեծութիւնն յիշոյ
« մի չափ կու լինի. ահագնատեսիլ է, մե-
« ծասիրտ է. ուժն ի ձեռնվին է. այլ ա-
« նասնոյ որսն չի հնազանդիր ուտելու, ամօթ
« կու համարի իւրն առաւել հպարտութենէն.
« անչափ մեծասիրտ է՝ որ մինչեւ ինքն չի
« որսայ՝ չի ուտեր. և ոմանք ասեն, թէ
« մեռած անասուն գտանէ կամ միս, որս-
« գայթ կու կարծէ, վասն այն չի ուտեր։
« Եւ զարձեալ, քաղցած աչք չէ՝ որպէս
« գայլ. յորժամ ուտէ և կշտանայ՝ զաւե-
« լորդն չի ուտեր, և ումեք վնաս չի առներ.
« վասն այն անասունք հեռեւանց առիւծուն
« բոլորն շուրջ կու գան՝ որ զիւր որսն ուտէ
« և կշտանայ, և աւելորդքն իւրեանք ուտեն։
« Վասն այն Սեւականջ անուն չորքոտանի
« մի կայ (Բորենի?) նման ազուեսուն. կ'եր-
« թայ հեռեւանց, վայրի անասունքն, այծ և
« ոզչար (ոչխար) և եզունքն, զինչ և իցեն,
« խռտուցանէ զնոսա. և նոքա կու փախչին.
« և առիւծն՝ քարանցատակն կու պահուլի,
« և նոքա չեն կարեր տեսանել զնա, վա-
« զելով կու անցանին, և նա կ'որսայ զնո-
« սա, և պատառեալ ուտէ մինչեւ որ կշտա-
« նայ, և թողու զաւելորդն և երթայ. և
« գայ Սեւականջվին անասունն՝ ուտէ, մինչեւ
« որ ինքն այլ կշտանայ. և գան այլ անա-
« սունքն ուտեն, և նոցա աւելուածն թռչունք
« ուտեն, և նոքա այլ կու կշտանան, և այլ
« աւելորդքն՝ սողունք և մեղք ուտեն։ Եւ
« զարձեալ, Առիւծն անչափ մեծասիրտ է և
« անհնազանդ, որ կին մարդ տեսանէ և
« կամ պառաւ, զեն չի աներ, չի հաւանիր,
« և զկինն՝ այր մարդու տեղ չի համարիր։
« Եւ այլ, թէ մերկ մարդ տեսանէ անցանի
« և երթայ, և զեն չի առնէ, մի թէ (բայց
« եթէ) երկու և երեք օր անօթի կեցեալ
« իցէ։

« Խնամածու է բնութեամբ. երբ ծնանի
« զկորունն իւր՝ որպէս մեռեալ անկանի կո-
« բունն երեք օր, և գայ որձն, անչափ
« ըզգան (սրզան) և լան մինչեւ երեք օրն,
« ապա բանայ կորունն զաչքն և կենդանա-
« նայ. և նոքա ուրախացեալ ելեալ որս անեն,
« իւրեանց զպէտսն հոգան։ Եւ զարձեալ,
« մարդասէր է, և քան զամենայն գազանս
« առաւել կու ընդելանայ մարդոյն։ Եւ
« յորժամ քուն լինի՝ կատարեալ չի քներ,
« և երկմիտութեամբ կու քնի, զաչքն չի
« խփեր կատարեալ. և զիշերն չի քնիր՝ այլ
« շրջագային և որս կու անէ. վասն այն
« ասէ առաքեալն Քրիստոսի Պետրոս, թէ
« թշնամին ձեր սատանայ իբրեւ գառիւծ շրջի,
« կամի կլանել զձեզ։ — Եւ թէ էգն կամ
« որձն հիւանդանայ, և մէկն կու ծառայէ
« նմա, և երթայ մէմուն (կապիկ) կու որսայ
« և բերէ որ ուտէ և ողջանայ։ Եւ այլ.
« երթայ ի գետեզերքն, խաչիփառ կու որսայ
« և ուտէ, և այնիւ կու ողջանայ, Աստու-
« ծոյ կամքն։ Եւ թէ մէկն մեռանի՝
« միւսն նստեալ վարանի և լայ իբրեւ զմարդ
« և սուք առնէ. առաւել հոգս լինալուն՝
« մոռանայ զինքն և անօթութենէն կու մե-
« ռանի։ Եւ թէ հիւանդանայ կանաչ՝ խոտ
« ուտէ և զմեղձն դուրս ձգէ, և այնիւ ա-
« ռողջանայ. և մէմունի միս ուտէ կամ խէ-
« ջիփառ, այնիւ առողջանայ. և ոմանք ա-
« սեն, թէ գայլուն միսն այլ ուտէ և ա-
« ռողջանայ։ — Եւ ընդելանայ հետ մարդուն.
« ապա (թէ) անխնայ հարկանես՝ նենգ կու
« պահէ, ժամանակ կ'որսայ որ գտանէ և
« զքեզ պատառեալ սատակէ։ Եւ թէ քա-
« ջասիրտ է և զօրեղ՝ կարես ի վերան հրծ-
« նուլ և զերկու ականջն պինտ բռնել, յաղթել
« կարող ես. զի իբրեւ զկատու կու կրծկրտի
« և այժն չի մնար. զի լկամ է նմա ականջն։

« Եւ խասլիաթն (օգուտ առիւծուն) այս է.
« ի վերայ մորթոյն նստիս հանապազ՝ գեղ է
« սընկանն... բժշկի Աստուծով։ Այնչափ մե-
« ծասիրտ է... թէ յորժամ ինքն որսայ այծ,
« էշ և այլ անասնոց պատառէ զորովայնն,
« մէնակ զսիրտն ուտէ և զարիւնն ծրծէ...
« Եւ յորժամ կրակ տեսանէ տեղի մի վա-
« ռած, չի գայր, հեռեւանց կու հայի և
« հեռեւանց կու շրջագայի. և սիրտն կու
« անցանի ի վնասակարութենէ և ի չարու-
« թենէն։ Եւ թէ մարդս լուռ և հեզաբար
« կանկնի և անմեղութեամբ հայի, կու ան-
« ցանի կ'երթայ, և չար չի աներ. քանզի
« առատասիրտ է և խնամածու. եւս առաւել
« մերկ մարդն ամենեւին չի գայր և չի հնա-
« զանդիր, անցանի և երթայ։ — Ասեն,